



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՔՆԹԵՐ  
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

«08» 08 2008թ.  
ք. Երևան

N 1-06/336-Ա

**ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐՔԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻՑ  
ՁԵՌՆՊԱՀ ՄԱԱՌԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11<sup>1</sup>-րդ հոդվածը և նպատակ ունենալով կանոնակարգելու առևտրի իրականացման վայրերում առևտրական գործունեություն իրականացնող ու սահմանված կարգով ՀԴՄ ներդրած կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքերի վարման կարգի նկատմամբ հսկողության հարցերը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ**

*ՀՀ ԿԱ ՀՊԾ վերադաս հարկային մարմնի ստորաբաժանումների ղեկավարներին և հարկային (տարածքային) տեսչության պետերին՝*

Մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը ձեռնպահ մնալ առևտրի իրականացման վայրերում առևտրական գործունեություն իրականացնող, սահմանված կարգով ՀԴՄ ներդրած կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մոտ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ՀՀ կառավարության 31.07.1997թ. N315 որոշմամբ ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքերի գրանցման ճշտությանն ուղղված ստուգումների իրականացումից:

ՀՀ ԿԱ ՀՊԾ ՊԵՏ՝

*[Signature]* Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ